

ՏԱՍԵՆՈՐԻ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 բուր, կես տարվանը 6 բուր:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրում են միայն համարդրուսան մէջ:

Օտարապարտաքիր դիմում են ուղակի:

Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար զմարում են

խրատնայն ր լատին 2 կոպեկ:

## ԲՈՂԱՆԳՎԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Շամախուց: Նամակ Ղուբայից: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հայոց լեռն-դիր Տրանսիա: Անգլիա: Թիբեթ: Նամակ Աւստրալիայից: Առտաքին լուրեր — ՀՆՈՒՎԳԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Զարաւու պրոֆեսորի յօդուածը:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Օգոստոսի 13-ին

Հնորակալութեան զգացմունքը չէ թողում ինձ լուր հասարակական այնպիսի գործիչների վերաբերութեամբ, որոնք լուռ ու մունջ գործում են յօդուած ազգի, առանց մի որ և իցէ ակնկալութիւն ունենալու:

Իրաւ է, ճշմարտ գործունեայ մարդիկ կարօտ չեն քաջաբերութեան, բայց երբ որ դէպի նրանց այդպիսի աշխատութիւնը անտարբեր է մնում հասարակութիւնը, գոցէ վնասուն, ուստի այս մի քանի տողովս կամենում եմ շամախեցուց զգացմանը թարգման լինել, որ նոյնպիսի վնասութիւն և մեր գործիչներին չը պատահի:

Շամախին էլ ուրիշ քաղաքների պէս ունի մի օրիորդական ուսումնարան: Անա 12 տարի է, որ այդ ուսումնարանը պահպանում է մի բաժանորդական ընկերութիւն, որ և եղև է միջընտանցական այդ ուսումնարանի հիմնարկութեան: Մեր ուսումնարանական պատմութեան մէջ միակ դէպք չէ այն, որ հասարակութեան պարտաւորութիւնը յանձն են աւանում կատարելու մի քանի պարոններ, ինչպէս Ալեքսանդրապոլի Սահականուչեան և Թիֆլիսի Գայանեան զգորոնները, բայց ինչպէս ամենայն հասարակական հիմնարկութիւն:

Շամախու սուրբ Սանդիստեան զպրոց էլ շատ արդիւնների պատահեց, որոնց յաղթեց և մինչև

այժմ իր գոյութիւնը ապահովեց մի քանի պարոնների միջնորդութեամբ:

Անցեալ 1880 թւին երբ ուսումնարանի շինութիւնը սկսված բաւական բարձրացած էր, չնչին պատահականութիւնով երկպառակութիւն ընկաւ ընկերութեան անդամոց մէջ, որով թէ շինութիւնը մնաց կիսատ և թէ ուսումնարանը քիչ մնաց փակվէր, բայց չնորձի մի քանի պարոնների, ինչպէս են պարոն Ալեքսանդր Բէկ Ղալաբանց և պարոն Յակոբ Բէկ Նիկիտեանցի, ուսումնարանը դարձեալ ոտքի կանգնեց և կարողացաւ ամբողջ տարին շարունակվել և գոհացուցիչ քննութեամբ ուրախացնել հասարակութիւնը:

Հնորակալութիւն մեծապատիւ պարոններին, մանաւանդ պ. պ. Ղալաբանցին և Նիկիտեանցին, որոնք իրենց բարոյական և նիւթական օժանդակութիւնը չը իննայցին մատող սերունդի կրթութեան համար: Յոյս ունենք, որ նրանք իրենց անչափաւոր գործունեութիւնը կը շարունակեն և առաջիկայ տարիները, աշխատելով ուսումնարանի շինութիւնը դուրս բերելու և ապահովացնելու ուսումնարանը:

Աղ. Տէր-Սահակեանց

### ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՑԻՑ

Օգոստոսի 10-ին

Աւագակութիւնը մեր գաւառում օրից օր աւելի ոյժ է ստանում: Յանդուգն կողպտումները, զողովիչները և սարտափելի մարդասպանութիւնները դառել են գաւառի բարոյական ախտը: Կարծես թէ այս վայրերի չարագործութիւնները իրանց գոյութեան համար քաղաքականութեան իրաւունք ունեն, կարծես թէ դրանք մեր կեանքի ամենահարկաւոր պայմաններն են, առանց որոնց մենք չէինք կարող ապրել: Սակայն նշանաւորն այն է, որ այս եղանակագործութիւնները ոչ ոքին չեն հետաքրքրում, ոչ ոք դրանցով չէ դրողովում: դրանք այնքան յաճախ են կրկնվում, որ կատարելապէս ստի

տի դառնում, այս քաղաքը, ըստ Չախուրի, պէտք է կառուցուած լինի Թէլ-Էրմէնի (Հայոց բըլուր) \*) բարձանց վրայ, ուր աւերակաց և հրեշտակեանց հետքեր ալ կը տեսնուին դեռ: Այս բլրին հարաւային կողման ստորոտը 200 հայ տուններէ բաղկացեալ Թէլ-Էրմէն, կամ Թաղ-հայոց ալ կոչուած գիւղը կայ, և արեւմտեան կողմը, 5—10 վայրկեան հեռու, Քօչ-Տիւսար՝ քիւրտներու գիւղը: Թէլ-Էրմէնի հայերն կաթնովի կանգն են, կրտէ պ. Զախաու: Մէկ եկեղեցի և երկու քահանայ ունին և, Տարալի հայոց պէս, արաբներէն, քիւրդերէն կամ տաճկերէն կը խօսին և հայերէն ընաւ չեն գիտեր: Թէլ-Էրմէն, որու քովին կանցնելի Զրկան գետը, Մարտիկէն շուրջ 2 ու կէս ժամ հեռի է դէպի արեւմտեան հարաւ: Պ. Զախաու իւր այս վերջին ճամբորդութեան միջոցին Պոլսոյ և զանազան գաւառաց հայերուն հետ ունեցած յարաբերութիւններովը, աշխարհաբարի վրայ ունեցած հմտութիւնը աւելի ընդարձակ լինելուն, ամենայն իրազեկութեամբ կը գրէ սորա վերաբերեալ իւր յօդուածը, զոր գերմաներէնէ ի հայ վերածելով, գրեթէ բառական հաւատարիմ թարգմանութեամբ, կը յանձնեմք ազգային բանասիրաց ուշադրութեան:

Հայոց գրաբարն ու աշխարհաբարը: Երկու իրիւր կան զխաւորաբար որ մեծագոյն ժողովրդեան մը ազգութիւնը, վտանգի առնել, փրկելու և պահպանելու գորութիւնն ունին: Միութիւն կրօնի, միութիւն լեզուի:

\*\*\*)— Թէլ և արաբերէն բառ մ'է, և բլուր կը նշանակէ: Թէլ-Էրմէնի հայ-կաթնովի քաջ ընտելաց վրայ պ. Թորթթի մէկ տեղեկագիրը ժամանակին թարգմանած ենք Մասիսի մէջ:

վորական, ցանկալի երեւոյթները ընաւորութիւն են ստացել: Հազիւ թէ չափազանցութիւն կը լինէր իմ կողմանէ, եթէ առնեմ, որ մենք, քաղաքացիք, պաշարման դրութեան մէջ ենք գտնվում: Քաղաքում ամենայն ինչ թանկացել է, այն պատճառով որ զիւղացիները վախենում են զալ քաղաք իրանց բերքերը վաճառելու: Գիւղա-տնտեսութիւնով պարագոյնները քաղաքում են բնակվում: մինչև անգամ գիւղերումն էլ երկիր-ըալի է մնալ: Որովհետեւ, բացի նրանց որ աւագակները որ ցերեկով կողպտում են արքունի ճանապարհներ վրայ, նրանք նոյնպէս որ ցերեկով, յարձակումներն են անում գիւղերի վրայ: այսպիսի յարձակումները կատարվեցան հետեւեալ երկու դիւրում՝ մէկը Չախալ-Ելլու, որտեղ կողպտեցին մի վաճառականի խանութը, միւսը Գաղալլու, ուր սպանեցին գիւղացիներ օգնականին: Աւագակների յանդիւնութիւնը հասնում է մինչև անգամ այն աստիճանի անբերկրութեան, որ կողպտում են բնակիչներին քաղաքից շատ մերձակայ տեղերում: քաղաքից 1 1/2 վերստ մերձակայութեամբ, նորերում, կողպտուցեան երկու մասվաճառներ, որոնցից աւագակները խլեցին 450 ր: Այս ամսի երկուսին, Գերբեմու գնացող ճանապարհի վրայ և քաղաքից ոչ հեռու, այն էլ պէտք է ասած որ մի և նոյն յայտնի տեղը, տեղի ունեցան 4 կողպտումներ: Նամակապէս վերև յիշված տեղը կողպտումից ազատեցան՝ զերբեմնացի այգեգործ պ. Գ... և օրիորդ Ա..., որոնց ուղեցուց կողակները կուռ էին աւագակների հետ:

Քաղաքում մօտ 150 կողակներ կան, որոնց բերել են սուել Շուրալից և Բագուրից կալանաւորվածների փախուստի առիթով:

### ՆԱՄԱԿ ԽՍՐԱԳՐԻՆ

Թիֆլիս, 24 օգոստոսի

Ամսոյ 23-ին հրատարակվեցաւ Թիֆլիսի հայ-թատրոնական վարչութեան յայտարարութիւնը,

ուր ի միջի այլոց յիշած է, որ բեկորաւորը կազմած կը լինի հայ-թատրոնական բեկորաւորի մասնաժողովի անդամները—պ. պ. Ա. Յովհաննիսեանի, Գ. Սուրբուհեանի և Ս. Արծրունու ընտրութեամբ և այլն:

Յաւօք սրտի յայտնում եմ, որ յիշատակած մասնաժողովը, ուր ես ևս անդամ լինելու պատիւ ունեմ, մինչև այսօր և ոչ մի նկատ չէ ունեցած, թէ և սրա մասին քանիցս անգամ ինձ պարտաւորութիւն եմ համարած դիմելու՝ նախ թատրոնական վարչութեան նախագահ իշխան Ամատունուն, քանի որ նա դեռ չէր ուղերոված Կ. Պօլիս, և ապա պ. Ա. Յովհաննիսեանին, իբրև բեկորաւորի մասնաժողովի նախագահին:

Գաբրիէլ Արծրունիեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 24-ին Արծրունու թատրոնում հայոց սիրողների ներկայացումն եղաւ: Ժողովուրդը շատ չէր թատրոնում: Հերկուլէս վճռվելը բաւական լաւ է, բայց պէտք էր աւելի կենդանի կերպով խաղալ նրան:

Թիֆլիսի հայոց մշակական թատրոնական խումբը առաջիկայ սեզօնի համար, արդէն կազմակերպված է և ակիւզան հրատարակված է: Տիկինները նորերը հետեւեալներն են, Հրաչեայ, Մարի-Նվարդ և Փաշայեան-Տէր-Գրիգորեան:

Լրագիրները հաղորդում են, որ ժողովրդական բաւարարութեան միջիտար, բարօն Նիկոլայ, որ այս ամառ իւր կալուածքի մէջ էր անցել, Թիֆլիսից ոչ հեռու, այժմ կրկին ուղերովեցաւ դէպի Ս. Պետերբուրգ:

Այս օրերս, ինչպէս մեզ պատմում են, հետեւեալ զուռելի անցք է պատահել Թիֆլիսում: Մի օրիորդ ծանօթներին մօտ է լինում կըր երկրորդական բուրբ հիւրերը նստում են լոտօ խաղալու,

րութեամբ անշատեալ այն երկիրներուն մէջ ուր հայերէն կը խօսուի, ժողովրդական բարբառք դրաբարէն այնքան կը զանազանին որքան իտալերէնը լատիներէնէ: Միւս կողմանէ, տոյր բարբառք լակ իրարմէ այն աստիճան կը տարբերին, որ երբեմն անկարելի կը լինի զմիմեանս հասկընալ: Պօլսեցի, դէյթունցի և սպահանցի ոչ-դաստիարակեալ հայերը զժուարաւ միայն կրնան զիրար հասկնալ (եթէ հասկնան):

Այժմ եթէ խնդրը սա կէտին վրայ է թէ լեզուն ինչպէս գործածելու է որ Հայ ազգութեան շահուցը ամենին աւելի օգտաբար լինի, պէտք է նախապէս ընդհանուր կանոն մը, ընդհանուր սկզբունք մը յառաջ բերնել հոս:

Լեզուն գործիւոր էութիւն մ'է (ein organisches Wesen). մտեալ լեզու մը նախապատմական ժամանակներէն մնացած մասնացեալ (ֆօսիլ) կենդանի մ'է: Հայերուն դրաբարը մտեալ լեզու մ'է, ինչպէս հին յունարեւը, լատիներէնը, գօթերէնը \*): Մտեալ լեզու մը կենդանացնել անհնար է, ինչպէս անհնար է կենդանի լեզու մը մէկ հարուածով մասնացնել \*):

\*)— Լեզուի խնդրոյն վրայ մեր մէջ գրողներուն մինչև ցարդ զիրար չը հասկընալն յառաջ կուգայ, ըստ իս, սա նշանաւոր պարագայէ թէ անոնցմէ շատեր պարզապէս չեն գիտեր լեզուաց կազմական կեանքը, զոր ես ներքին կեանք պիտի կոչեմ, բաղադրամաբ արտաքին կամ պատմական կեանքին, որ միակ կը գրաւէ անոց ուշադրութիւնը: Աշխարհաբարի դատը պաշտպանողներուն գլխաւոր գործը պէտք է լինի, և պիտի լինի, նախ միտքերը լուսաւորել այս հիմնական կէտի վրայ:

\*)— Հետաքրքրաշարժ է տեսնել ոմանց սուրբ զայրոյթն այս շնորհալի բառին դէմ, և այն մտացի բայց անհիմն փաստեր, որովք կը ճգնին

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ԶԱԽԱՒ ՊՐՕՖԷՍՈՐԻ ՅՕԴՈՒԱԾԸ «ՓՈՒՆ-ՋԻ» ՄԵՋ

Ի պատասխանի իւր մէկ պոլսեցի բարեկամի խնդրոյն, յօդուած մը գրած է հայ լեզուի վրայ պրոֆեսոր զօկտոր Զախաու հռչակաւոր գերմանացի լեզուագէտն, որ Բէրլինի ինիվէրսիթէի լեզուաբանութեան և հին լեզուաց դասաւոր է և հայերէնի ի գատ ստիւական և ափրիկեան զանազան լեզուաց քաջանուստ, Գերմանիոյ կայսրը և Բէրլինի արքայական ակադէմիան, կէս առ կէս հայթայթելով նորա ծախքերն, զրկեցին զինքն 1879-ին ի Սիբիա և ի Միջագետս, հին Տիգրանակերտի տեղն և աւերակները զտնելու համար: Պրոֆեսորին այս խնդրոյն վրայ գրածները վերջին աստիճան հմտուած և հետաքրքրական լինելուն, մասնաւանդ հայոցս համար, կուգեմք սորա վրայ անհնին խօսիլ, և այժմ այսքան մը պարտ կը համարինք ըսել թէ մեր մի քանի հեղինակաց և աշխարհագրաց հետ, Տիգրապէթերը Տիգրանակերտ կոչելը զլուովն սխալ է, ըստ նոր խոզարկութեանց \*): — Տիգրապէթերը նախնեաց Ա միտան է \*\*): — Իսկ Տիգրանակեր-

\*)— Որպէս մի քանի անգամ գրուեցաւ Մասիսի մէջ, որ միշտ «Տիգրապէթեր» կըսէ, և ոչ Տիգրանակերտ: Ծ. Բ.  
\*\*)— Գեռ կը մնայ Թուրքերէն անունը, «Գաւա-Ամիտ»:  
Ծ. Բ.

որիորդը չը կամենալով լստօրի խաղին մասնակցել, բերել է տալիս մի ֆայետոն և կամենում է տուն գնալ: Բայց կառապանը փոխանակ նրան տուն տանելու, ստանում է Վերս սոված թաղը: Այդ տեղ մի գինետունից դուրս են գալիս մի քանի դիմակաւորված պարոններ, ընկնում են ֆայետոնի վրա, յափշտակում են խեղճ օրիորդին և բռնաբարում են նրան: Մի քանի ժամից յետոյ ուշաթափված օրիորդին ոտականները բերում են իր հօր տունը:

Հին-Նախնիքները մեզ գրում են որ այս րօպէիս տի ֆը նշանաւոր կոտորածներ է անում այդ քաղաքում և նրա գաւառում: Նոյն իսկ քաղաքում օրը երկու, երեք մարդ անպատճառ մեռնում են: Կրա վրա ուշադրութիւն դարձնող չը կայ: Քաղաքային երկու բժիշկները անհող են: Այդ բաւական չէ: Թղթակիցը ասում է որ յայտնվել է նոյնպէս մի նոր, տարօրինակ հիւանդութիւն. ողջ առողջ մարդը յանկարծ դեղնում վայր է ընկնում, փետանում և կապտում է: Տեղը և բնակարանը արդէն սովորական հիւանդութիւններն են Հին-Նախնիքներին:

Յայտնի է որ ամբողջ Եւրոպայում և Ամերիկայում բժշկական գիտութիւնը դեռ չէ գըտել մի հնար, մի դեղ կատաղած շան կծելուց մարդիկներին բժշկելու: Կատաղած շանից կծածը անբուժելի և համարվում և արդէն ինքն իրան դատապարտված է մահվան: Բայց մենք վաղուց լսած էինք, որ մեր սեղանական ժողովրդի, Տայերի և վրացիների մէջ կան ժողովրդական բժշկական դեղեր այդ սարսափելի հիւանդութեան դէմ: Այս օրերս մեր բարեկամ պ. Ա. Ամիրխանանց, գործով գնացած լինելով Գօրի, ծանօթանում է մի վրացի կալուածատիրոջ, պ. Շալիկովի և նրա ընտանիքի հետ: Յայտնվում է որ այդ ընտանիքում մի դեղ կայ կատաղած շան կծելուց: Այդ դեղը ամենահասարակն է: Պէտք է վեր առնել կանաչ, թափանցիկ շիշի ապակի, փոշի դարձնել նրան սանդի մէջ մանր ծծծելով նրան, յետոյ դարձեալ մաղել այդ փոշին շատ բարակ շորով (օրինակ կրիսա) որ բոլորովին բարակ ալիւր դառնայ և տալ հիւանդին երկու, երեք օր շարունակ: օրը չորս անգամ, իւրաքանչիւր անգամ 6 թէ 7 գրամ այդ փոշիից: Մեր բժշկների ուշադրութիւնն ենք դարձնում այդ միջոցի վրա:

Ստացանք «Ռուսիայի Ռիտին» լրագրի համար պ. Յ. Տէր-Գրիգորիանից 4 թուր: Առաջվայ փոզերի հետ կանի 62 թուր:

Ասկէ կը հետեւի թէ Ա. Գրիգոր Լուսաւորչի լեզուն 19-րդ դարու հայերուն համար նոյն կարևորութիւնը ունի ինչ որ Կիլիկիոյնի լատիններէնը իտալացոց համար, Ուլիկիոյնի գոթերէնը գերմանացոց համար, և թէ նոյնպէս անմտութիւն կը լինի գրաբառ լրագիր մը տալ հայ գիւղացիի մը ձեռքը, որքան երբ ուղղել իտալացիի մը լատիններէն լրագիր կարդացնել \*):

«Արդ՝ եթէ հին լեզուին վերականգնութեան ձառնան փակեալ է, ինչ կերպով կրնան ուրեմն հայերը բնօրինակ լեզուի մը տէր լինիլ, որ թէ գրականութեան և թէ կենաց սովորական պիտոյիցը ծառայելու յարմարութիւն ունենայ: Ասոր պատասխանենք:

Նոյն եղանակով, որով իտալացիք և գերմանացիք: Այս ազգաց սկզբնական լեզուները թօքաւնայի և Սաքսոնիայի ժողովրդական բարբառներն (դիւալէ կա) են, որոնք յընթաց դարուց միայն մէկ տոնի մը բարբառ է, և մեն տոնմբուն, բոլոր ժողովրդի և ան լեզուներն եղան, քանզի այս երկու նահանգները դատարարականութեան և քաղաքակրթութեան մէջ ամեն ուրիշները գերազանցելով՝ նոյա վրայ տիրողական ազդեցութիւն մը բանեցոցցին:

Հաստատել թէ «կենդանի» է մեր գրաբարը: Լեզուաց ընդհանուր կեանքին նկատմամբ ազդեցութիւն և մեր նախնեաց պատուական լեզուին վրայ մասնաւոր համակրութիւն մը բաւականապէս կը բացատրեն այս երևոյթը:

\*)—Եւ ինչ պէտք է ըսել այն հայ Արիստոտէլին, որ կը գրէր, անշուշտ զմեզ խնդացնելու համար, թէ եթէ գրաբար թերթ մը հիմնենք, կրնայ Մասիսի չափ կարգացող ունենալ, գոնէ ինք հեղինակած չը լինէր գրաբարստան ինքնակոչ աշխարհաբարով գործ մը, որ ճիշտ իւր լեզուին համար չը կարգացուիր... Ծ. Բ.

Ստացանք մի գրքոյկ հայերէն լեզուով որ նորերումս հրատարակեցաւ Թիֆլիսում, Մ. Բօտինեանցի և ընկ. տպարանում: Գրքի վերնագիրն է «Հայաստանի սովը և էջմիածինը»: Հեղինակութիւն Արմենակ Սիւնի: Գրքոյկի սկզբում մի պատկեր էլ կայ: Գինը 30 կօպէկ է:

Ս. Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Ս. Պետերբուրգի նախկին քաղաքապետ գեներալ Բարանով, նշանակված է այժմ Արխանգէլեան նահանգի նահանգապետ:

Ներկայ ամբողջ ամառը Թիֆլիսում մինչև յուլիս ամիսը հով էր, մինչև անգամ ցուրտ էր և շատ անձրևային էր: Իսկ բուն ամառնային շրջերը սկզբեցան միայն օգոստոս ամսից և մինչև այժմ շարունակվում են, չը նայելով որ նորերումս մեծ անձրև էր եկել:

«Кавказъ» լրագիրը հաղորդում է որ շուտով դիտարութիւն կայ մտցնել Կօջօր ասված տեղում քաղաքային ինքնավարութիւն: Այդ ամառնոցում աներ կամ կալուածներ ունեցողները կընտրեն իրանց միջից 10 ձայնաւոր, որոնք կընտրեն քաղաքապետ: Որովհետև Կօջօր, քանի գնում է, աւելի նշանակութիւն է ստանում թիֆլիսցիներին համար, այդ պատճառով ցանկալի է որ այդ ամառանոցի տեղը կառավարի իր սեփական զուճայի միջոցով և այդպիսով ինքն հողայ իր հասարակական և սնտեսական ամենահարգեալ պէտքերի մասին:

Լրագիրները հաղորդում են, որ հոկտեմբեր ամսին կը գումարվի Ս. Պետերբուրգում 20 անձերից բաղկացած մի յանձնաժողով, որոնք կանչված կը լինեն, որպէս էկզպրտներ զանազան նահանգներից, Ռուսաստանի մէջ հարեցութեան անտը նուազեցնելու խնդրել քննելու համար:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

«Journal d'Orient» լրագրի № 34 մէջ տպվեցաւ մի ընդարձակ յօդուած, Հայոց խնդրի վրա, որի հետ մենք, ահա, ծանօթացնում ենք ընթերցողին:

Եւրոպայի պետութիւնները, ցանկանալով Հաստատել արեւելքում մի յայտնի կարգ,

Արդ՝ այս սկզբունքը հայերուն լեզուին մասնաւորելով՝ հետեւալ արդիւնքը կը ստանամք: 1. Ազգայնացի ժողովրդական բարբառները չեն կրնար փոխակերպիլ ի գրական լեզու, որ ամբողջին շահուն համար ալ բաղձալի բան մը չէ:

2. Եթէ հայ ժողովրդին տուեալ է լաւադոյն պայմանաց ներքե կարգաւոր, այն երկրին լեզուն, ուր կը գտնուի ազգին մտաւորական կեդրոնը, պիտի լինի ազգային յարաբերութեանց և բոլոր ազգին կրթեալ մասին լեզուն, առանց սակայն ընաշինել ընկու ժողովրդական բարբառները, որոնք, ինչպէս յայտնի է, նաև բարձր գերմաներէնին (Hochdeutsch) և իտալերէնին ընդ հօռպ ծաղկափթիթ կը շարունակեն իրենց կեանքը:

Առ այժմ հայոց մտաւորային կենաց ամենն նշանաւոր կեդրոնը կ. Պոլիսն է, կիզոն, որ կարելի է փոխադրել այլուր:

Մենք ներկայ պարագայից մէջ Պոլսոյ կըրթեալ հայոց խոսած և ցրած լեզուն կը նկատենք իբրև միակ տիրող լեզու, իբր ազգային լեզու ապագային: Ռուսի սոյն պոլսեցոց աշխատութիւններէն և իրենց աշխատութեանց մըտաւորական արժեքն միայն կանեալ է լեզուին ճակատակազիրը: Պոլսոյ կրթեալ հայերը պէտք է իրենց լեզուին միջոցաւ ճառեալ ամենուսն, նոյն իսկ իրենց ամենահեռաւոր հայրենակիցներուն, և սրեց կեանքին ու մտածութեանց վրայ իրենց ոգւոյն, իրենց բարձր կրթութեան կնիքը դրոշմելու համար ամեն ջանք ի գործ դնեն: \*)

\*)—Այսպէս զարգացած են ամեն նոր լեզուներ, և այն պարագայ թէ կ. Պոլսոյ հայերը գաղթականութիւն մ'են, և բուն հայրենաց հողին վրայ չեն բնակիր, ազգեք մը չէ որ կ.

որ կարողանար հաստատ ապահովութեան գրաւական ներկայացնել, ինչպէս և Բալկանեան թերակղզու վրա, իրանց հայեացքը դարձրին Փոքր-Ասիայի այն մասի վրա, որ հայոց ցեղի օրօրոց է: Ինքն Բ. Կուռը զըզաց անհրաժեշտութիւնը չը թողնել այդ աշխատասէր, արդիւնարեւող և խելացի ազգութիւնը այն թշուառ դրութեան մէջ, որի մէջ նա գտնվում էր, հեռացած լինելով Եւրոպայից և նրա ներկայացուցչներին: Աւելորդ է այստեղ խօսել հայոց ազգութեան այն մասի վիճակի վրա, որ չէ թողել իր հայրենիքը, աւելորդ է նոյնպէս համեմատել նրա դրութիւնը այն մի միլիօն հայերի հետ, որոնք բնակվում են Անդրկովկասում: Բաւական է որ Բ. Կուռը համաձայնեց Սան-Ստեփանօի դաշնագիրը ստորագրել, որ պահանջում էր հայերով բնակված երկրի վարչութեան բարեփոխում, բաւական է որ նա ճանաչեց պարտաւորութիւնը պաշտպանել հայերին քիւրդերի դէմ—դրանով նա արդէն հաստատեց և խոստովանեց որ հայերը տանջվում են այն անմխիթար դրութեան մէջ, հարստահարված լինելով քիւրդ վայրենի ցեղից:

Հայերը չեն պահանջում առանձին դոմինիւն, կամ քաղաքական անկախութիւն, նրանք ինդրում են միայն հասարակական ազատութիւն, իրանց գոյութիւնը, իրանց կայքը, իրանց կանանց և աղջիկների պատիւը ապահովող հիմնարկութիւններ, վերջապէս ինդրում են ապրելու իրաւունքը: Եթէ 1840 թ.ին Թիւրքիայից հայերին տուած իրաւունքները ճշմարիտ գործ դըրված լինէին, այդ աշխատասէր ազգը վաղուց է կը ծաղկեցնէր իր երկիրը և կը բազմանար թող մեզ վկայ լինի որ Երեւանեան նահանգում երեսուն տարվայ ընթացքում հայերի թիւը կրկնապատկեց:

Հայոց ազգութիւնը երախտագէտ է դէպի սուլթանը և նրա նախորդները, նրանց բարի ցանկութիւնների համար: Բայց եթէ այդ բարի ցանկութիւնները ապարդիւն եղան, եթէ հրատարակված բարենորոգումները չը գործարկեցան,—այդ այն պատճառով է, որ նրանց գործարկելը յանձնվեցաւ

կրթեալ պոլսահայոց բարբառը, որ կը ճգնի արդէն ի միապետութիւն, փութով իր նպատակին հասցնելու շատ միջոցներ կան: 1) Արտասովոր հարուստ գաւառէն կրնայ շատ փոխառութիւն լինիլ ներկային պիտոյիցը համար. այսինքն մի միայն բառարանական նիւթ և առանձին բառեր, քանզի մեռեալ լեզուի մը միւս տարբերը հոլովում, խոնարհում, համաձայնութիւն, և այլն, անհնար է վերստին ի կենսք կոչել \*):

2) Գրական լեզու մը մեծ ազգի մը ամեն պահանջմանցն և պիտոյիցը ճշգրի պատասխանելու համար, կրնայ մասնաւոր բարբառներ ալ թիչ մը բառեր փոխ առնուլ: Ինչպէս ըրած են նաև իտալերէնն ու գերմաներէնը:

Ի վերջոյ սա ևս կուզեմ դիտել տալ թէ զըրբական և ժողովրդական լեզուները երբէք նոյնը—(ի դատ տիւր):—չեն և ոչ ալ կրնան Պոլսոյ հայոց քաղաքակրթութեան հետ անոնց լեզուն ալ տարածուի իրանց հեռաւոր ազգակցաց մէջ:

\*)—Ոմանք ի նկատ առնելով այն պարագայ թէ համաձայնական կարգով աշխարհաբար շատ կը սօտնայ գրաբարի, կը կարծեն թէ ներկիւն և կարելի է վերականգնանայնել մեր նախնեաց լեզուին քերականական և համաձայնական բոլոր կարգերն ու կանոններն: Արդ, պէտք է գիտնալ թէ մեր աշխարհաբար քաղաքակրթական արդի պիտոյից համեմատ մշակուելով, ոչ այնչափ զըրբաբարի, որչափ եւրոպական կենդանի լեզուաց ընդհանուր օրէնքին կը սօտնայ, որ է օրէնք վերլուծական լեզուաց: Ուշադիր դիտողի մը համար, աշխարհաբարն այնքան ունի մեր գրաբարի համաձայնական կարգերն, որչափ ֆրանսերէնինը կամ անգլիերէնինը: Անշուշտ այս պատճառաւ է որ գրաբարի հետ եւրոպական լեզու մ'այ գիտցող անձինք լուի գրաբար գիտցողներէն աւելի լաւ կը գրեն աշխարհաբարը: Ծ. Բ.

մի տեսակ պաշտօնեաների, որոնք կամ չէին հասկանում նրանց նշանակութիւնը, կամ չէին տեսնում նրանց անհրաժեշտութիւնը, կամ վերջապէս ընդդէմ էին այդ բարենորոգումներին իրագործմանը կրօնական համոզմունքից և անձնական հաշից թելադրված: Այդ պատճառով ինչ բնաւորութիւն և ունեան այն ընթացքները, որ պետութիւնները պարտաւորութիւն կը համարեն տալ այդ խելացի ցեղին, որ բնական միջնորդ պէտք է դառնայ արեւելքի և արեւմուտքի մէջ,—նախ և առաջ չը պէտք է մոռանալ որ բոլոր ընթացքները ապարդիւն կը լինեն, եթէ զգուշութեամբ չընտրվեն այն պաշտօնեաները, որոնք կանչված կը լինեն նըրանց իրագործելու: Սկզբնական պայման ամեն աջողութեան նոր հիմնարկութիւններին համար, դա մի գլխաւոր նահանգապետի նշանակութիւնն է այնպիսի շրջանից, որ բոլորովին ոչինչ կապ չունենար հին պաշտօնեաների հետ, այսինքն քրիստոնեաների շրջանից, և որովհետև խնդրը Հաստատելն է վերաբերում, որին պէտք է նշանակել մի հայ ընդհանուր նահանգապետ: Ինչ ազգութեան ու բարոյական գաղափարների և պատկանի այդ բարձր պաշտօնեան, իզուր կը լինի սպասել որ նա եռանդով և լուրջ կերպով իրան նուիրել ծանր գործին, եթէ ամեն օր զգար կարելիութիւն գրկված լինել իր պաշտօնից: Սուլթանը, իր զահական առաջին ճառի մէջ յայտնեց որ կայսերութեան գլխաւոր շարքներից մինն այն է, որ պաշտօնեաները շատ հշտութեամբ արձակվում են իրանց տեղերից: Ուրեմն իր հպատակների շահը աչքի առնելով, նա կարող էր իր հայոց նահանգներին տալ մի նահանգապետ որ ապահոված կը լինէր, թէ կը պահպանի իր պաշտօնը վեց կամ եօթ տարվայ ժամանակամիջոցում: Ընդհանուր նահանգապետի ընտրութիւնը լինելով բոլոր ընթացքների առաջին պայմանը, պետութիւնները Սան-Ստեփանօի դաշնագրի 16-րդ յօդուածի գօրութեամբ, որ վաւերացվեցաւ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով, կարող էին, առանց սուլթանի

Լինիլ: Կայն գիւղացին, որ իւր շուրջը եղողներուն հետ միայն իւր բարբառը (դիւալէ կա) կը խօսի, դպրոցի, եկեղեցու ոչ և ընթերցողութեան միջոցաւ գրական լեզուն հասկանալու և գրելու գործածելու կը վարժուի: Այսպէս կամուրջ մը շինուելով ժողովրդական և գրական լեզուաց միջև կեցած լինի վրայ, ընդհանուր միջոց մը կը գոյանայ, որով բոլոր ազգը զիարք կը հասկնայ: Առանց դպրոցի, եկեղեցու ոչ և ընթերցողութեան միջոց չը կայ ընդհանուր ազգային լեզու:

Ճշմարիտ է որ ընդհանուր ազգէն ընդունված գրական լեզուն, կրթնախնդրուն լեզուն, կրնայ խիստ զանազան կերպիւ արտասանուիլ, զորօրինակ, վիէննացին յոյժ այլապէս կը կարգայ և կը խօսի բարձր գերմաներէնը քան զհամպուրցիցին. սախ ամենին վնաս չունի: Բնաւ կարեւորութիւն չունի թէ թիֆլիսցի մը Ստամբուլ լրագիր մ'այլապէս կարգայ քան զէթուսցի հայ մը: Պահանջելին միայն սա է, և ասոր միայն աշխատելու է, որ ամբողջ ժողովրդին մէջ մի մասերը հասկնան ամեն ինչ որ իրենց ներկայացուի: \*)

Բերլին յունիս 81, ԵՏ. ՉԱՍՈՒ

\*)—Բայց այս կարգի գիտնական դիտողութիւնք կրնան մեծ արժեք չունենալ այնպիսի աչաց առջև, որոց վրայ սե յօնքեր կան: Առ այժմ պէտք եղածն այս է որ ամառվան տաքերն անցնեն, և ի բնէ եռանդատ գրեւներ, որք աւելի տաքցած կրնան լինիլ, պաղին, և մինչև այն ամեն անոնց մէջ տեղ կրնայ բացուիլ թիչ մ'աւելի լուրջ մտածութեան համար... Ծ. Բ.

Հեղինակութեանը ձեռք տալու, մասնակցել այդ ընտրութեանը, ընդունելով նոյն եղանակ ընտրութեան, որ գործ է դրվում Լիբանանի նահանգապետի նշանակելու մէջ, ապահովելով այդ նշանակութիւնը ամեն ցանկալի գրաւակներով: Ընդհանուր նահանգապետ այդ եղանակով նշանակելով և յանձնարարութիւն ստանալով սուլթանից հսկել հրատարակված բարենորոգումների գործադրութեան մասին, պէտք է ունենայ հարկաւոր Հեղինակութիւն և իշխանութիւն իր յանձն առած պաշտօնը իր անձնական պատասխանատուութեամբ կատարելու:

Բայց ի՞նչ բեֆօրմներ պէտք է մտցնել Հայաստանում: Գորան «Journal d'Orient» պատասխանում է թէ Հայոց ազգը, իրաւամբ, կարծում է որ բաւական է մի աւ մի թւել Հայաստանի այժմեան դրութեան մէջ օրինակ չարիքների աղբիւրները, որպէս զի որովհետեւ այն բարենորոգումները, որոնք պէտք է մտցնվեն իրանց հայրենիքում:

Վիեննայի լրագրի այդ յօդուածի շարունակութեան հետ մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին «Մշակի» հետեւեալ համարներում:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական պարլամենտական ընտրութիւնների մինչև այժմ յայտնի եղած հետեւանքները արդարացում են վաղուց յայտնուած այն ենթադրութիւնը, որ չափաւոր հանրապետական կուսակցութիւնը պէտք է յաղթէր միապետականներին և արմատականներին: Բեյվիլի երկու շրջանների մէջ էլ ընտրված է Գաւթետտա, չը նայելով նրա հակառակորդների ջանքերին: Թէպէտ նրա ստացած ձայների մեծամասնութիւնը շատ նշանաւոր չէ, մանաւանդ Բեյվիլի երկրորդ շրջանում, որտեղ նրա հակառակորդը լրագրական աշխատակից Բեյվիլիօնն է և որտեղ նրա ընտրութիւնը միջնակ է համարվում, բայց այնու ամենայնիւ Գաւթետտա յաղթող է հանդիսացել: Ընդհանրապէս ընտրված են 398 հանրապետականներ, այնպէս որ հիմնկուց հանրապետականները պատգամաւորների ապագայ ժողովում աւելի նշանաւոր մեծամասնութիւն կունենան, քան թէ առաջ ունէին: Բացի այդ դեռ ևս 65 կրկնաքուէարկութիւններ պէտք է լինեն, որի ժամանակ երեւի հանրապետականներից շատերը կընտրվեն, այնպէս որ այդ կուսակցութիւնը աւելի ոյժ կը ստանայ: Մինչև այժմ հանրապետականները, համեմատելով նախկին ժողովի հետ, 45 աւելորդ տեղեր են ձեռք բերել: Ավներե է ուրեմն, որ պատգամաւորների ժողովի կազմակերպութիւնը շատ քիչ է փոխվել: Առաջվայ պատգամաւորներից ընտրված են 364 մարդ, այնպէս որ ժողովի բնաւորութիւնը անփոփոխ կը մնայ:

Պարլամենտական նոր շրջանը շատ չի փոխի Ֆրանսիական գործերի բնական ընթացքը: Մինչև անգամ սահմանադրութեան վերաքննութիւնը հազիւ թէ զրականապէս առաջարկվի և հանրապետականների ընտրողական պրօգրամի մէջ մտցրած սենատը մի նոր սխալ կը գործի, որի պատճառով երկիրը կարող է պահանջել նրա փոփոխութիւնը:

Ընտրութիւններից առաջ փարիզի մէջ կատարեալ հանգստութիւն էր տիրում, միայն Բեյվիլի շրջանի մէջ շարժում էր նկատուում: Կուսակցութիւնը նախազգուշական միջոցներ գործ դրեց, որպէս զի

ընտրութիւնների ազատութիւնը չը խանգարվի:

Գաւթետտա հետեւեալ ազդարարութեամբ դիմեց Բեյվիլի երկրորդ շրջանի ընտրողներին: «Գիտե՛մ եմ ձեզ, յուսալով, որ դուք ազատ քուէարկութեան շնորհիւ հաւանութիւն կը տաք այն քաղաքականութեանը, որին հետեւում էր ձեր հաւատարմատարը 12 տարի, ծառայելով ժողովրդին և հանրապետութեանը: Գուք ամենքդ ինձ ճանաչում էք. ես ամբողջապէս և յաւիտեան ձեզ եմ պատկանում: Միայն ձեզանից եմ կամեւում ստանալ օրէնսդրական իրաւունքներ, որպէս զի ձեր ընտրութեամբ և ինձ առած Հեղինակութեամբ հետեւում այն քաղաքականութեանը, որ ամբացում է հանրապետական հիմնարկութիւնները, որ ձգտում է հասնել ժողովրդական առաջադիմութեանը և աղջային վերածնութեանը: Առաջ, միշտ առաջ, առանց անկարգութիւնների և բռնութիւնների: Երբէք յետ չը դառնալ: Սրանք են իմ և ձեր նշանաբանը: Անընդհատ աշխատենք հանրապետութեան և Ֆրանսիայի համար»:

ԱՆԳՂԻՍ

Կլազսոն ներկայումս զբաղված է մի նոր վերանորոգութեան նախագծով, որի մասին նա ակնարկեց Լօնդոնի Լորդ-մերի ճաշկերոյթի ժամանակ և որի մասին նորեւրումն զարձեւել խօսեց Գրինվիչի մէջ մի նիստրական ճաշի ժամանակ: Այդ նոր վերանորոգութիւնը վերաբերվում է պարլամենտական կանոնադրութեանը: Այդ վերանորոգութեան մասին Կլազսոն սասց հետեւեալը: «Պարլամենտի գործունէութեան անցեալ շրջանի անցքերը մանաւանդ նշանաւոր են նրանով, որ ապացուցին մի նշանաւոր վերանորոգութեան անհրաժեշտութիւնը: Այդ վերանորոգութիւնը պէտք է վերադարձնէ նրա նշանակութիւնը իբրև ազատութեան և կանոնաւոր օրէնսդրական մեքենայի նեցուկ: Այդ պարտականութիւնը մենք յետաձգում ենք մինչև եկող տարի, բայց նա պահանջում է մեր բոլոր ուշադրութիւնը և աշխատանքները: Եթէ իւրաքանչիւր օրէնսդրական յօդուածը մեզ այդքան հետաքրքրում է, ուրեմն որքան աւելի հետաքրքրի պէտք է լինի այն վերանորոգութիւնը, որ վերաբերում է օրէնսդրական ժողովին, այն օրէնսդրական ժողովին, որից օրինակ են առել բոլոր ժողովուրդները և որը ամենից շատ նպաստում է ձգտումներին դէպի ազատութիւն»:

Այդ խօսքերը աղմկալից ծափահարութիւններով ծածկվեցան:

Իրլանդական կալուածական միութեան անդամները անդադար կրկնում են, որ նրանց ոչ մի կալուածական օրէնք չի բաւականացնի և որ այժմեան կալուածական շարժման նպատակն է բոլորովին բաժանել Իրլանդիան Անգլիայից: Գուրլինի կալուածական միութեան շարժական վերջին նիստի ժամանակ Սեկսոնն նկատեց, որ միութեան վարդապետութեան շնորհիւ կաթօլիկական և բողոքական անունները Իրլանդիայի մէջ վերջանում են առանց արիւնհեղուութեան: Միութիւնը պէտք է երկրի կառավարութիւնը լինի: Վերջին երկու տարիների ընթացքում, շարունակեց Սեկսոնն, կալուածական միութիւնը երկու անգամ պարլամենտական դժուարութիւններ ծագեցրեց և անբաւականութիւն դրեց համայնքների և լորդերի ժողովի մէջ: Միութեան գանձարանը 10,993 ֆունտ ստերլինգ կամաւոր նուիրատուութիւններ են մտել, որոնցից

2,242 ֆունտ ստերլինգ ֆերմերներին օժանդակութիւն է տուած: Կալուածական միութիւնը զարգացրեց օրէնքների գործադրութիւնը որպէս զի նրանք փոփոխվեցան արդարութեան սկզբունքի համեմատ»:

ԹԻԻՐԳԻՍ

Եպթթ օրը Բ. Գուէն Պատրիարքարան եկած զիր մը կը հրամայէ որ Ամեն Խըրիմեան Սրբազան և Սրուանձտեանց Գեր. Գարեգին Վարդապետ Վանէն անյապաղ Կ. Պօլիս կոչուին:

Լսածնուս նայելով, Բ. Գրան սոյն որոշման պատճառ եղած են՝ կարսի Առաջնորդ Գեր. Աղուանեան Գրիգորիս եպիսկոպոսի երկու նամակներն՝ ուղղեալ առ Խրիմեան Սրբազան և առ Գարեգին վարդապետ, նամակներ, որք բռնուելով Բ. Գուէն զրկուեր են և որոց մէջ կատարած պատճառող խօսքեր կան եղիւր:

Բ. Գուէն ասկէց երկու շաբաթ առաջ սոյն հրամանը բերանացի տուած էր Պատրիարքարանի Գաբու Քէհեասի Աբրահամ էֆէնտիին, և լրագիրք օմնաք ալ իմանալով հրատարակած էին, բայց Գաբու Քէհեասի Աբրահամ էֆէնտին յատկապէս մեր գրասենեակը գալով՝ չեմք գիտեր ինչ տեսակ իմաստուն քաղաքականութեամբ սուտ հանած էր այդ լուրն և մեզնէ ալ խնդրած որպէս զի հերքեմք իբրև անհիմն:

(Մասիս)

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԻԱՅԻՑ

Տեպլից, 25 օգոստոսի

Բերլինի կոնֆերենցիայից յետոյ Եւրոպան ստիպեց Թիւրքիային հեռանալ կատարել իրան վրա առած պարտաւորութիւնները: Թէև բանը սկզբում մի փոքր զանաղ էր գնում, այնու ամենայնիւ Մօսկոնեղորթի սահմանի խնդիրը վերջացաւ, յունացն էլ վերջնաւոր վրա է մնում է միայն հայոց հարցը, որ միջված է 61-որդ յօդուածում:

Բերլինի կոնֆերենցիայից սկսած համարեալ օր չէ անցել որ լրագիրների մէջ խօսակցութիւն չը լինէր յունաց և Մօսկոնեղորթի սահմանների խնդիրների մասին: Իսկ հայոց խնդիրը, կարծես, մոռացված էր և պատմութեան կանոնաւոր արդէն սկսել էր Եւրոպայի իր սրտում տեղ բռնել: Ե՛հ, ինչ պէտք է լինի, ասում էինք, հայի ճակատագիրը խեղճութիւնը, նեղութիւնը և տառապանքն է, հայը անտէր է»:

Ամեն բան, որ հային ապագայում միխթարութիւն և երջանկութիւն է խոստացել, միշտ որպէս մի ցնորք է անցել և զարմանալի չէ որ մենք մեր ապագայի մեր պետական իրաւունքները, ըստ որում իւրաքանչիւր յայտ, որ մենք ունեցել ենք ապագայում, ի դուր է անցել: Բայց չը նայելով այդ բոլոր անաղոթութիւնների, հայը ունի մի կերպ անմեղ երեսայական սնափառութիւն, որ յատուկ է ամեն փոքր ազգերին. նա շատ ուրախանում է և մի տեսակ հրճուանք է զգում, երբ օտարները նրա վրա խօսում են, նրա ազգը գովում են, նրա ազգութեան առանձնայատկութիւններ են պատմում, նրան ապագայ են խոստանում: Բայց աւաղ ինչ օգուտ, երբ ուրախութիւնը միայն ուրախութիւն, հրճուանք լսի հրճուանք է մընում, և այդ իր նեղ երեսայական շրջանից չէ դուրս գալիս ու գործ չէ դառնում:

Հայ օրիորդի սիրտը, որ փոքր է շատ է ազգային պատմութիւնից տեղեակ է, անտարբեր չէ մնում հայոց ապագայի մասին և նրան աւելի զգալի է հայի խեղճութիւնը: Արդեօք կը գայ ժամանակ երբ մենք մեր ազգի վատ դրութիւնը և խեղճութիւնը անցեալում կունենանք: Այս իմ մի քանի տող գրեւը ձեզ, յարգելի խմբագիր, պատճառ տուեց Վիեննայի «Neue Freie Presse» լրագրի, օգոստոսի 19-ի համարի մէջ տպված յօդուածը հայոց խնդրի մասին, որ ես թարգմանել տուի և ահա իսկական էլ ձեզ եմ ուղարկում:

Հայուհի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Իտալական թագաւոր ինքն անձամբ կը բանայ աշխարհագրական համաշխարհային ժողովը, որ շուտով տեղի կունենայ Վենեցիայում:

— Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Գարֆիլդի առողջութիւնը դեռ եւս նոյն անորոշ դրութեան մէջ է: Գնտաղը չեն հանել մարմնից, որովհետեւ հիւանդը դեռ եւս շատ թուլ է: Տեղագրի դրութիւնը շարունակվում է: Գարֆիլդի առողջութեան մասին տեղեկութիւն բերող հեռագիրները շատ անգամ հակասող են լինում: Մի օր իմանում ենք որ նրա դրութիւնը լաւ է, միւս օր թէ դարձեալ յուսահատական է:

— Լօնդոնից գրում են որ իրանդիայում շարունակվում են շատ անգամ կռիւներ ժողովրդի և պօլիցիայի մէջ:

— Լօնդոնից գրում են որ «Freiheit» լրագրի գաղապարով խմբագիր Մոստի հետ շատ լաւ են վարվում բանտի մէջ: Բացի սովորական կերակուրից, նրան ամեն օր տալիս են կաթի երկու մեծ բաժակ: Տաճականիկը աշխատանք, որին Մոստ գաղապարով է, նրանումն է բողոքանում որ նա դերձիկութիւն է անում: Մի խօսքով ֆիզիկապէս նա ծանրութիւններ չէ կրում, միայն զանգատվում է այն բանի վրա, որ նրան ընթերցանութեան համար որոշ գրքեր չեն տալիս, բացի կրօնական գրքերից:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 24 օգոստոսի: Աժճէի, Շանհայի և Բանկօկի մէջ յայտնվեցաւ խօյրաւ: 1,07407, 24 օգոստոսի: «Times» լրագրին հեռագրում են Կլէտտից որ Ե. Ելլեր-խան, հրաժարվելով Աբբուրախան-խանի հետ պատերազմ շարունակելուց, հրատարակեց սրբազան պատերազմ անկախացիների դէմ:

ՓԱՐԻՑ, 24 օգոստոսի: Կրկնաքուէարկութիւնների հետեւեալը այս է. ընտրվեցան 56 հանրապետականներ, 3 յայտնաւորներ և 5 բնաւորականներ: Ազգային ժողովը չը հաշուելով կոյճիանները, բաղկացած է 459 հանրապետականներից, 47 բնաւորականներից և 41 միապետականներից:

ՏԱԼՏԱ, 22 օգոստոսի: Պատգամաւորութիւնները նաւատորմից, օֆիցերներից և հիւրեր ժողովվելով, ուղիղ կէսօրին Նորին Բարձրութիւն դուրս եկաւ ժողովածուներին հանդիպելու: Գնեւրով-Աղմիւրալը հանեց զգալի և զգացված ձայնով կարգաց Բարձրագոյն հրովարտակը: Երբ յանձնեցին նրան կայսրների պատկերները, Մեծ Իշխանը խաչակնքեց և արտասուէր թափելով համբուրեց թանգազին պատկերները: Կոմս Միլիտին օգնեց Նորին Բարձրութեանը իր վրա հաղցնել այդ ընծան: Յետոյ Նորին Բարձրութեանը ընծաներ առաջարկեցան իրան մօտիկ անձինքներից և զվարդիական նաւատորմի մէջ ծառայողներից: Մաղթանքներից յետոյ, նախաձայնիկի ժամանակ Նորին Բարձրութիւնը յայտնեց իր անկեղծ ցանկութիւնը որ նաւատորմը ապագայում էլ պատուով և փառքով շարունակէր ծառայել թագաւորին և հայրենիքին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 50 կ., երկրորդ 94 ր. երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 229 ր. 25 կ., երկրորդ 226 ր., արևելեան առաջին 90 ր. 87 կ., օսկի 7 ր. 62 կ.: Խուսաց 1 ր. Լօնդոնի վրա արժէ 26 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 222 մարկ, 50 պֆ., Փարիզի վրա արժէ 273 ֆրանկ, 50 անտիլի: Բօրսայի սրամաղրութիւնը ամեր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

# Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., Տրծողներ 1 ր.,  
Ճարտող արժուներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱՌՈՒ  
4 ր., ԲԱԶԱՍՏԱՆԻ ՄԱՀԱՍԱԼ 10 րուր և  
աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի  
աման ջրորոցներ 50 կ., պատեղա ծխողների  
Համար 60 կ. Փոռնոր, անդրիական վԱՆՆԱ-  
ՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱ-  
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

10,000 զոյգ զուլբաններ 25 կ.—ից զոյգը,  
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—  
1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր.,  
1,000 ՄԱՀԱՍԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400  
արշին բամբակ. 1 ր.—1 ր. 30 կ., պա-  
րուսինա 40 կ.—1 ր., 300 Հասա բեկոլիեր  
4 ր.—35 ր., 700 արբոմ ԿԻՍՍԱԿՆՈՎ, 10,000  
Փոռնա թէյ թէթԱՄԱՆՈՎ, 1 ր. 65 կ. եր-  
կամի գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-  
մար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ  
ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

39—100

144 Արծրունու գայերէա 144  
ամենաէժան պահեստ  
մերէի և հայելիների.

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ**  
անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՍՅ  
գասազիրբը լոյս տեսաւ և ծախվում է  
Կովկասեան ու Կենտրոնական գրավաճա-  
ռանոցներու մ:

Գինն է 40 կօպէկ:  
Իսկ ով ցանկանում է հատը 35 կօպէ-  
կով ձեռք բերել, գինը ԿԱՆԻԻԿ վճա-  
րելով և ճանա պարհա ծախսը իր վրա  
առնելով:

Թող գինն մեզ հետեւայ հասցէով.  
Վ. Կ. Տիֆլիս. — Ու Աւլաբարժ. Ի-  
վանու Պետրովիչու Նազարյանց.

**ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ**  
**ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** մուրաբա-  
ներ, կօնֆիտներ, ԿԱԿԱՕ, ըրինձ, Ա-  
ՄԱՆԵՂԷՆ, բոկալներ, թասեր, երես լուա-  
նալու ամաններ, չայիիներ, ԲԱԺԱԿՆԵՐ,  
կերակրի ամաններ (սյճի), մատուցարան-  
ներ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, զգալներ,  
ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիաներ, տետրակ-  
ներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ, արբոմ-  
ներ, ՄԱՀԱՍԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիկօ, պա-  
րուսին, Թաշկինակներ, երեսբրիչներ, կեծու-  
կա, զուլբաններ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՑՆ, խե-  
րես, կօնեակ և այլն: ԹէՑ մեծ քանակու-  
թեամբ վԱՑԱՌԱԿԱՆՆԵՐԻ Համար ՊՈՒԿԸ  
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54  
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել  
**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:**

Մի և նոյն տեղը էժան գնով. ԵՐԲԵՏ մա-  
գնեցիկա, խմոր ԾԱՐԱԻԻ գէժ, ԽԻՆԱՑԻ գի-  
նի ջերմի գէժ, կարբոլեան ՓՕՇԻ, հեղուկ  
և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վառերկօզե-  
տի Համար, պարսկական փօշի: 57—100

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԸ ԵՒ ԷՉ-  
ՄԻԱԾԻՆԸ**

Վերնագրով գրքոյիլը, էջմիածնի և ա-  
վառանջների վիճաբանական պատկերով: Թիֆ-  
լիսում ծախվում է Կենտրոնական գրավա-  
ճառանոցում, իւրաքանչիւրը 30 կօպէկով:  
Օտարաբաղաբացիք 10-ից ոչ պակաս ցան-  
կացողները առանց փոստայի ծախքը հո-  
գալու, կարող են զինել Մնացական Բէգ-  
լարեանցին հետեւեալ հասցէով. Վ. Կ. Տիֆ-  
լիս, Верхняя Таможенная улица, № 31,  
Мнацакану Бегларьянцу.

1—4

Արդէն ծախվում է  
**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ**  
Անունով մեր ՉՈՐՐՈՐԴ տարուայ  
գասազիրբը Կենտրոնական և Կովկասեան  
գրավաճառանոցներում:

Գինն է 60 կօպէկ  
Գումարով տնտեսներին գրիչում կը լինի:  
Իսկ ով ցանկանում է հատը 55 կօպէ-  
կով ձեռք բերել, գինը ԿԱՆԻԻԿ վճա-  
րելով թող գինն մեզ հետեւայ հասցէով.  
Վ. Կ. Տիֆլիս. — Ու Աւլաբարժ. Ի-  
վանու Պետրովիչու Նազարյանց.

9—25

Въ Редакции газеты  
«МШАКЪ»  
Продается  
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ  
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“  
Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.  
Цѣна 25 коп.

**Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ-  
ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ**

Տեղափոխեցաւ Գանօվսկայա փո-  
րոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝  
ՏՐՕՅԻՑԻ փողոցը № 11. փօստատան  
ետեի ջուշան: Ընդունվում են ամեն լի-  
զուով և ամեն տեսակ պատուէրներ ամե-  
նամաշէլի գներով:

Նոյն տպարանում ընդունվում են և պա-  
տուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ  
տպագրութեան համար փայտի և պղնձի  
վրա:

**«Խ Ե Ն Թ Ը»**

ԱՐԿԱՄՆԵՐ ՎԵՂՁԻՆ ՌՈՒՍ-ՓՈՒՐԲԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԵՂՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՅՅԻՒ

Տպագրած մաքուր թղթի վրա, գիրքը բազ-  
կանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է  
Մշակի խմբագրատանը, Կենտրոնական  
գրավաճառանոցում, Կովկասեան գրա-  
վաճառանոցում պ. Զաքարիա Գրիգորեան-  
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզար-  
ջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագաղին-  
ներում:

Գինն է 1 րուր 20 կօպ:

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի իմ թարգմանած՝ **ՄԱՅ-  
ՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՑ  
ՎՐԱ ՀԻՄՆՈՒԱԾ**՝ հեղինակութեան Ժ. Բամբուսի: Ուստի գիտեցով  
այն յարգելի բարեկամացս, որոնք բաժանորդներ գտնելու նկրութիւնը յանձն  
էին առել, խնարհաբար խնդրում եմ, որմինչև օգոստոսի վերջը բարեհաճին  
յանձնել ինձ բաժանորդութիւնը, որպէս զի կարողանամ աւարտել գրքիս  
տպագրութիւնը առաջիկայ սեպտեմբերին:

Գրիգոր Շահբաղաղեանց

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍ-  
ՏԵՐ, մագերը ամբացող և նրանց  
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերագրու-  
ձնող: Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱ-  
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կօպ.  
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՑԻ  
ԻՂ, մագերը ամբացողու հա-  
մար, 1 ր. ամանը վրձին գլխա-  
ցաւի գէժ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-  
ՊՕՆ և հոտաւէտ ջրեր և այլն:  
18—100

**Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Պ Ա Ր Տ Է Չ**  
ԵՒ  
**Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն Ո Ւ Մ**  
Ընդունելութիւնները սկսվում են օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սկսվում է քննա-  
նոցի 1-ից: Մանկական պարտէզի՝ մէջ ընդունվում են մինչև 7 տարեկան երեխաներ, իսկ  
ճարտական ուսումնարանում մինչև 13 տարեկանները:  
Իշխան Ն. Ամատունու տուն, Վելիամինովսկի փողոցի վերայ:  
Բ. Միրմանեանց

**ԵՂԱՐԲ Կ. ԵՒ Ս. ՊՕՊՕՎՆԵՐԻ**  
ԱՌԵՏՐԱԿԱՆ ՏՆԻՑ  
**Մ Օ Ս Կ Վ Ա Յ Ո Ւ Մ**  
Գրասենյակը Կուզնեցկի կամրջի վրա, Կ. Ս. Պօպովի տանը:  
Պատիւ ունինք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր Ֆիլիսոփի ԹԷՅԻ  
առևտուրի համար բաց արինք նորերումն նոր խանութներ և հետեւեալ քաղաքներում:  
**ԽԱՐԿՈՎՈՒՄ**—Պետրովսկի փողոցի վրա, սեփական տանի  
**ԹԻՖԼԻՉՈՒՄ**—Գորովսկի պրօսպեկտի վրա, Միրմանեան: տան:  
**ՍԷՎԱՍՏՕՊՈԼԻՈՒՄ**—Բօլշոյ-Մօրսկոյ փողոցի վրա, Կօզէն վաճառականի  
տանը:  
Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ:  
**ՎԱՐՇԱՎ ԱՅՈՒՄ** և **ԿԻԷՎ ՈՒՄ**—Թէյն որ առած է Փոռնաերի, կէս  
Փոռնաերի և քառորդ Փոռնաերի, ուղարկվում է մեր գլխաւոր պահեստի խանութից,  
որ գտնվում է Մօսկովայում, Կրասնօսէլսկի փողոցի վրա, սեփական տան: 9—30

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանգինեանի հետեւեալ  
աշխատութիւնը. **ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ  
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ**՝ ճիւղական դպրոցների 4-դ տարվայ դասընթացը,  
և միանգամայն 1-ն, 2-դ և 3 տարիների համար հրահանգ:

**ՎԻՆՆԱՑԻ ՄԵԲԷԼ** (աթուներ և բազկաթուներ) ծախվում են մեծ  
քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կատարիկաց փողոցի անկիւնում ՄԻ-  
ԲԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԳՈՍՅԱՆԻ պահեստում:  
Օտարաբաղաբացիք կարող են զինել այս հասցէով. Կ. Տիֆլիս, Михаилу  
Н. Теръ-Никогосову.  
61—150

**ПРИСЯЖНЫЙ ПОВѢРЕННЫЙ**  
**А. С. ФРЕНКЕЛЬ**  
Переѣхалъ на Сололакъскую ули-  
цу, въ домъ К. Меликова.  
ВЪ РЕДАКЦІИ ГАЗЕТЫ „МШАКЪ“  
продаются слѣдующія нѣмецкія брошюры:  
Die Oekonomische Lage der Armenier  
in der Tŕrkei. von Dr. GRIGOR ARZRU-  
NI. Ubersetzt von A. Amirchanjanz. Preis  
25 kop.  
Die Hungersnoth in Tŕrkisch-Armenien  
von Dr. GRIGOR ARZRUNI. Ubersetzt von  
A. Amirchanjanz. Preis 20 kop.

**ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱ-  
ՆԱԶՈՂՆԵՐԸ** պէտք է գնեն ԱՆ-  
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ թէյ  
լու տեսակի Փոռնա 1 ր. 20 կ. և 2 ր.  
և համեմատան առաջինը 1 ր. 60 կ. հետ  
և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՑ-  
ԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիա-  
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ  
թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆ-  
ՑՈՒԹԻՒՆԸ**: Բացի այդ Անգլիական  
խանութը կը գտնուի է **ՄԱՔՈՒՐ** թէյ  
առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ**:  
42—100

**ՄՐՕՄԱԿՆԵՐ** կտորիկու փոշի:  
Ծախվում է **ԾԱՏՈՒՐՈՎ** լաւ  
պի մագաղինում: